ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ 2023-24 Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

2023-24 ուս. տարում կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 7 հուշագրեր և պայմանագրեր.

1. Փոխըմբռնման հուշագիր Գորգանի գյուղատնտեսական գիտությունների և բնական պաշարների համալսարանի միջև (Իրանի Իսլամական Հանրապետություն)
2. Գայզենհայմի համալսարան
3. Վառնայի տեխնիկական համալսարան
4. Կուբանի պետական ագրարային համալսարան (Ի.Տ. Տրուբիլի անվան)
5. Իսֆարա քաղաքում Տաջիկստանի տեխնոլոգիական համալսարանի մասնաճյուղ
6. Տաշկենտի պետական ագրարային համալսարան
7. Հարավային Բոհեմիայի համալսարան (Չեխիա)

ԷՐԱԶՄՈՒՍ+ ՀԳ1

2023-24 թթ. Էրազմուս+-ի շրջանակներում ՀԱԱՀ-ն ունի կնքված 49 պայմանագրեր (որից նոր՝ 27 պայմանագրեր, իսկ 22-ը՝ նախորդ տարվանից), և ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս ծրագրով համագործակցում է 42 համալսարանների հետ: Ընդ որում, թե պայմանագրերի և թե համագործակցող համալսարանների քանակը աննախադեպ է հաշվետու ժամանակաշրջանի համար:

2024-25 թթ. ՀԱԱՀ-ն իրականացրեց արտագնա 36 աշխատակիցների վերապատրաստումներ և դասախոսություններ եվրոպական տարբեր համալսարաններում, 8 արտագնա սովորողների դասընթացներ և պրակտիկաներ և ընդունեց 9 աշխատակիցների:

Հաշվետու տարում ՀԱԱՀ-ն Էրազմուս+ ծրագրով առաջին անգամ սկսել է համագործակցել նաև Չեխիայի, ինչպես նաև մի քանի նոր համալսարանների հետ:

Էրազմուս+ շարժունության տվյալներ

		Արտագնա		Ներգնա
	Հաստատություն	ուսա-նող	աշխա-տակից	աշխա-տակից
1.	Դուբրովնիկի համալսարան, Խորվաթիա		1	
2.	Անգել-Կնչևի համալսարան, Բուլղարիա		2	
3.	Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարան, Իսպանիա		2	
4.	Սևիլիայի համալսարան, Իսպանիա		1	
5.	Յագիելոնյան համալսարան, Լեհաստան			1
6.	Էստոնիայի կենսագիտական համալսարան, Էստոնիա	1		+2 (Սիմոն Մանա) Զարինեին մոռացել էր ավելացնել տվյալների բազայում
7.	Նորվերգիայի արկտիկական համալսարան, Նորվեգիա		1	
8.	Ավստրիայի բն. գիտ. և կենսագիտ. համալսարան, Ավստրիա		3	
9.	Մալթայի մշակույթի, գիտության և տեխնոլոգիայի քոլեջ, Մալթա		1	
10.	Հարավային Բոհեմիայի համալսարան, Չեխիա			2
11.	Մարկեի պոլիտեխնիկական համալսարան, Իտալիա	2	6	
12.	Գազենհայմի համալսարան, Գերմանիա	2		
13.	Կվիձինի Պովիսլանսկի համալսարան		1	
14.	Կրակովի գյուղատնտեսական համալսարան, Լեհաստան		2	2
15.	Շչեցինի համալսարան, Լեհաստան		1	
16.	Պորտոյի համալսարան, Պորտուգալիա		1	
17.	Ավեիրոյի համալսարան, Պորտուգալիա		2	

18.	Էվորայի համալսարան, Պորտուգալիա		1	1
19.	Բեժայի պոլիտեխնիկական ինստիտուտ, Պորտուգալիա	1	2	2
20.	Կաստելո Բրանկոյի պոլիտեխնիկական ինստիտուտ	1		
21.	Պանթեոնի հասարակագիտական և քաղաքագիտական համալսարան, Հունաստան		1	
22.	Արևմտյան Ատտիկայի համալսարան, Հունաստան	1		1
23.	Գրանադայի համալսարան, Իսպանիա		1	
24.	Վալադոլիդի համալսարան, Իսպանիա		1	
25.	Հունգարիայի գյուղատնտեսական և կենսագիտական համալսարան, Հունգարիա		6	
	Ընդամենը	**8**	**36**	~~**9**~~ 11



Վերջին տարիներին ՀԱԱՀ-ում նկատվում է անգլերենին տիրապետող ուսանողների նվազում: Այսպես, 2023-24 թթ.-ին աշխատակիցներ և ուսանողների համար հայտարարված բազմաթիվ մրցութային տեղեր թափուր մնացին (Կրակովի գյուղատնտեսական համալսարան, ուսում և/կամ պրակտիկա – 1; Հունաստանի

համալսարաններում (ուսում) – 1; Ռուսեի Անջել Կնչևի անվան համալսարան, ուսում – 5; Իսպանիայի Վալյադոլիդի համալսարան, վերապատրաստում կամ համատեղ դասավանդում/վերապատրաստում – 1; Դուբրովնիկի համալսարան, ուսում կամ պրակտիկա – 1; Բեժայի պոլիտեխնիկական ինստիտուտ, ուսում կամ պրակտիկա – 2; Արևմտյան Ատտիկայի համալսարան, ուսում - 1; Մինհոյի համալսարան, Ավեիրոյի համալսարան, Էվորայի համալսարան, ուսում; Իսպանիայի Ալմերիայի համալսարան, ուսում – 1; Սալոնիկի Արիստոտել համալսարան, ուսում; Կաշտելու Բրանկուի համալսարան, ուսում կամ պրակտիկա – 1; Ավստրիայի բնական ռեսուրսների և կենսագիտությունների (BOKU) համալսարան, ուսում – 1; Բրագանսայի պոլիտեխնիկական համալսարան, ուսում - 2; Հռոմի Սապիենցա համալսարան, դասավանդում; Հռոմի Սապիենցա համալսարան, ուսում; Կլուժ-Նապոկայի գյուղատնտեսական գիտությունների և անասնաբուժական բժշկագիտության համալսարան, ուսում կամ պրակտիկա - 1; Պորտոյի համալսարան, ուսում; Ալմերիայի համալսարան, հետազոտություն – 1; Բեժայի պոլիտեխնիկական ինստիտուտ, ուսում կամ պրակտիկա – 2; Պովիսլանսկու համալսարան, Կվիձին, ուսում– 4; Մարկեի պոլիտեխնիկական համալսարան, ուսում և պրակտիկա – 4; Գրանադայի համալսարան, ուսում - 1; Հռոմի Սապիենցա համալսարան, ուսում): Դրանք վերաբերում են ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետներին:

Միաժամանակ նկատվում է նաև անգլերենին տիրապետող աշխատակիցների քանակի կտրուկ նվազում: ՄԿԴ-ն հետևողականորեն փորձում է հնարավորություն տալ այն աշխատակիցներին մասնակցել շարժունությանը, ովքեր կամ չեն մասնակցել, կամ ավելի վաղ են մասնակցեն դրան: Սակայն, անգլերենին տիրապետող աշխատակիցների խիստ անբավարարության պատճառով ընտրող հանձնաժողովը ստիպված է լինում նույն աշխատակցին 2 անգամ երաշխավորել շարժունության համար նույն տարում, ինչը ստիպված քայլ է ՄԿԴ-ի կողմից: Հակառակ դեպքում եվրոպական համալսարանները կդադարեն համագործակցությունը ՀԱԱՀ-ի հետ: Ընդ որում, այս տարի առաջին անգամ ՄԿԴ-ն արձանագրել շարժունության ընդհանուր թվաքանաի անկում 2016 թ.-ից ի վեր, ինչը ՄԿԴ-ն համարում է խնդրահարույց: Պատճառը ոչ թե առկա ծրագրերի պակասն է, այլ անգլերենին տիրապետող աշխատակիցների և ուսանողների կտրուկ նվազումը:

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

SMARTI Էրազմուս+ ՀԳ2

2024 թվականի փետրվարի 2-ից Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մեկնարկեց Էրազմուս+ ՀԳ2 SMARTI («Աջակցություն անգլերենով դասավանդման (EMI) նորարարական մեթոդաբանությանը, մոտեցումներին եւ գործիքակազմի կիրառմանը՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը եւ միջազգայնացումը բարելավելու նպատակով») ծրագրի շրջանակում իրականացվող երկրորդ պիլոտային դասընթացը: Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ստեղծված EMI (Անգլերենը որպես ուսուցման միջոց) կենտրոնը և բուհի կողմից մշակված ու փորձարկված մոդուլները գործընկերային արտաքին գնահատում են անցնում. այդ նպատակով փորձագետները 2024թ. մարտի 1-ին առցանց հանդիպում-քննարկումներ ունեցան ՀԱԱՀ պրոռեկտորի, բուհում SMARTI ծրագրի և EMI կենտրոնի համակարգողների, դասավանդող անձնակազմի, վերապատրաստված մասնակիցների հետ:

2024 թ. մայիսի 6-10-ին կայացավ հնգօրյա աշխատանքային հանդիպում Ռիգայի տեխնիկական համալսարանում: Հանդիպմանը մասնակցում էին նախագծի կոնսորցիումի անդամ ԵՄ և ՀՀ բուհերի, ինչպես նաև ՈԱԱԿ 28 ներկայացուցիչներ:

GeoTAK Էրազմուս+ ՀԳ2

2023 թ. սեպտեմբերին ԵՊՀ-ում տեղի են ունեցել ասպիրանտուրայի դասընթացների գնահատման, կրթական պլանի ժամանակացույցի և դրա իրականացման միացյալ քայլերի քննարկում, իսկ հոկտեմբերին միջոցառում նվիրված հետազոտություններին և նորարարություններին, որտեղ ներկայացվեցին նաև GeoTAK ծրագիրը և նրա շրջանակներում կատարված հետազոտությունները:

Կազմվեցին և ամբողջականացվեցին ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնառության նյութերը, որոնք հաջողությամբ ներկայացվեցին դեկտեմբերին Վալենսիայում տեղի ունեցած հերթական վերապատրաստումների և աշխատաժողովի ժամանակ:

2024թ.–ի հունվարին ծրագրի ամփոփումը տեղի ունեցավ Հայաստանում կազմակերպված գիտաժողովի և աշխատաժողովի ընթացքում, որտեղ ներկայացվեցին

3 տարի տևողությամբ GeoTAK ծրագրի արդյունքները և հարատևությունն ապահովող հետագա անելիքները: Ծրագիրն ավարտվեց 2024թ. հունվարի 14-ին:

Ծրագրի ամփոփիչ հաշվետվությունն ընդունվել է Եվրամիության համապատասխան կազմակերպության կողմից դրական կարծիքով:

AFISHE Էրազմուս+ ՀԳ2

2024 թ. փետրվարի 19-ին մեկնարկեց AFISHE նախագծով նախանշված գործողությունների հերթական փուլը, այն է՝ նոր կամ վերափոխվող մոդուլներ կազմողների երկշաբաթյա վերապատրաստումը: Դրա մեկնարկը տրվեց Պորտոյի համալսարանում, որի պրոֆեսորները փետրվարի 19-ից հյուրընկալցին հայաստանյան և ուկրաինական բուհերի 16 դասախոսների և հետազոտողների: 2-րդ շաբաթ իրենց վերապատրաստումների շարքը սկսեցին նախագծի մյուս երկու համալսարանները՝ Դուբրովնիկի համալսարանը և Սլովակիայի գյուղատնտեսական համալսարանը Նիտրայում: Ընդհանուր թվով շուրջ 44 աշխատակիցներ կվերապատրաստվեն վերոնշյալ եվրոպական գործընկեր համալսարաններում, որոնցից 9-ը կլինեն ՀԱԱՀ-ից:

2024 թ. ապրիլի 26-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանը հյուրընկալել էր ջրային կուլտուրաների ծառայությունների և բիզնեսի զարգացման գծով ամերիկացի փորձագետ, դոկտոր Դեյվիդ Սթիվենին, ով AFISHE նախագծի աշխատանքային խմբի համար հանդես եկավ դասախոսությամբ «Ձկան շղթա» թեմայով:

2024 թ. մայիսի 20-24 միջանկյալ հաշվետվության հետ կապված հարցերի քննարկման համար նախագծային հերթական հանդիպումը կայացավ Դուբրովնիկի համալսարանում:

2024 թ. հունիսի 13-ին, Էրազմուս+ միջազգային համագործակցության շրջանակում առաջին մասնաշենքի առաջին հարկում բացվեց AFISHE («Կանաչ գործարքին միտված ակվակուլտուրայի եւ ձկնային տնտեսության կրթության զարգացում Հայաստանում եւ Ուկրաինիայում. կրթությունից դեպի էկոլոգիա») նախագծի լաբորատորիան:

T-GREEN Էրազմուս+ ՀԳ2

«Կրթության փոխակերպումը հանուն կանաչ եւ կայուն ապագայի» («T-GREEN») եռամյա նախագիծի շրջանակում ՀԱԱՀ-ն մշակելու և ներդնելու է երկու կրկնակի մագիստրոսական որակավորում՝

1. Double MA Degrees Green Economy and Management (Կանաչ տնտեսություն և կառավարում մագիստրոսական որակավորում). կրկնակի որակավորումը առաջարկվելու է Երևանի պետական համալսարանի հետ համատեղ:

2. Double MA Degrees in Sustainable Cities (Կայուն քաղաքներ մագիստրոսական որակավորում). կրկնակի որակավորումը առաջարկվելու է Ճարտարապետության եւ շինարարության հայաստանի ազգային համալսարանի հետ համատեղ:

Ծրագրի իրականացման առաջին տարում տեղի են ունեցել աշխատանքային խմբերում ներգրավված փորձագետների բազմաթիվ հանդիպում-քննարկումներ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային, Միջազգային Հելլենիկ, Կրակովի Յագելոնյան և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարաններում: Ակտիվ իրականացման փուլում են 1-ին, 2-րդ և 3-րդ աշխատանքային փաթեթների աշխատանքները, 2024 թ. մայիսից մեկնարկել են 4-րդ աշխատանքային փաթեթի աշխատանքները, որոնք են՝ 3 միջդիսցիպլինար համատեղ/կրկնակի աստիճանների մշակում, լիցենզավորում և փորձարկումը, ինչպես նաև առկա կրթական ծրագրերի վերապրոֆիլավորում մագիստրոսական կրթության և տնտեսության «կանաչ» վերափոխվելուն աջակցելու նոր տեսլականին համահունչ:

VETfarm Էրազմուս+ ՀԳ2

ՀԱԱՀ-ը 2023 թ. դեկտեմբերից մասնակցում է 2 տարի տևողությամբ VETFarm «Միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման օրինակելի համագործակցություն Հայաստանում պիստակի արտադրության ուղղությամբ. աշխարհատարածական մոտեցում» Էրազմուս+ ՀԳ2 նախագծին:

Կոնսորցիումի գործընկերների միջև տեղի են ունեցել մի քանի հանդիպումներ ՀԱԱՀ-ում կարիքների գնահատման վերաբերյալ՝ քննարկելու մարտահրավերները, կարիքները և առաջարկվող լուծումները: Կազմվել են VETfarm ծրագրով նախատեսված վեց դասընթացների նկարագրերը: Դասընթացները կենտրոնացած են

հեռակառավարման (RS) և GIS-ի և դրանց կիրառությունների վրա պիստակի ֆերմաների կառավարման և պիստակի ծառերի մոնիտորինգի վրա:

Հստակեցվել է անհրաժեշտ սարքավորումների ցանկը, սակայն գնման գործընթացը դեռ չի կարող տեղի ունենալ, քանի որ խնդիրներ կան ֆինանսավորման փոխանցման հետ կապված:

Ծրագրի նյութերի տեղադրման նպատակով ՀԱԱՀ–ի կայքում ստեղծվել է էջ՝ https://anau.am/vetfarm/ ֆբ էջ՝ https://www.facebook.com/profile.php?id=61559733441286, ծրագրի համակարգողի կողմից գրանցել է նոր վեբ տիրույթ՝ vetfarm.org, ինչպես նաև LinkedIn՝ https://www.linkedin.com/company/vetfarmproject/:

Կոնսորցիումի գործընկերների կողմից կազմվել է ծրագրի ժամանակացույցով սահմանված հաշվետվություն և մինչև 31.06.2024թ. ներկայացվել է հաստատման:

LISS24 Էրազմուս+ ՀԳ2

Տարեսկզբին մեկնարկել է LISS24 («Սովորեք-Նորարարեք-Վաճառեք-Հաջողեք») նախագիծը, որում ՀԱԱՀ-ը կոորդինացնում է Sales Lab-երի համար անհրաժեշտ սարքերի և տպիչների ձեռքբերման, գործընկեր համալսարաններում դրանց գործարկման և վերապատրաստման աշխատանքային փաթեթի հանձնառությունները:

2024թ. մայիսի 19-25-ը աշխատանքային այցով Ֆինլանդիայում էին խմբի ղեկավար, ԳՀԻ Դաշտավարության և անասնապահության մեքենայացման բաժնի վարիչ. ՄՍՃ և ՏԱ ամբիոնի դոցենտ Արթուր Ալթունյանը և ծրագրի հետազոտող, Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի դասախոս Հասմիկ Գևորգյանը: Առաջին հանդիպումը նախատեսված էր Տուրկուի կիրառական գիտությունների համալսարանում (Turku University of Applied Sciences, TUAS), որտեղ մասնակիցների համար կազմակերպել էին «B2B առևտրայնացման կառավարում» թեմայով դասընթաց և հանդիպում iMOTIONS ընկերության գործընկերների հետ:

Հաջորդ հանդիպումն Հելսինկիում՝ Հաագա-Հելիա կիրառական գիտությունների համալսարանում էր (Haaga-Helia University of Applied Sciences), որն այս տարի հյուրընկալել էր ESC-2024 (European Sales Competion) ամենամյա մրցութը, որին ՀԱԱՀ-ի աշխատակիցները մասնակցել են որպես մրցույթի լիիրավ դատավորներ:

Աշխատանքային խումբը ներկայումս կենտրոնացված է, որպեսզի հնարավորինս հագեցված և լիարժեք լաբորատորիաներ լինեն հայաստանյան ԲՈՒՀ-երում B2B Sales Lab ֆորմատով:

Visegrad+ նախագիծ

Այս տարի ՀԱԱՀ-ն ունեցավ մեկ այլ նոր նախագիծ Visegrad+ ծրագրի շրջանակում, ինչը նախորդի տրամաբանական շարունակությունն է և վերաբերում է փափուկ հմտությունների զարգացմանը: Աշխատանքային գործընթացը կսկսվի 2024 թ. սեպտեմբերից:

ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

Մասնակցություն գիտաժողովներին և համաժողովներին

- Կրթության և հմտությունների ասիական գագաթնաժողովին (ASES) և DIDAC India 2023 կրթական ցուցահանդես (Հնդկաստան)
- «100 Գաղափար ԱՊՀ երկրների համար» միջազգային երիտասարդական մրցույթ-ցուցահանդես (Բելոռուս)
- MAVETA ծրագրի շրջանակներում համաժողով (Շվեցարիա)
- Եգիպտական 4-րդ միջազգային գիտաժողով «Միկրոբիոտան և միկրոբիոմը առողջության և հիվանդությունների շուրջ» թեմայով (Եգիպտոս)
- Դեպի Տիրանայի նախարարական համաժողով 2024 հետևանքներն ու հետաքրքրության կետերը բարձրագույն կրթության համակարգերի համար ԵՄ-ին սահմանակից գործընկեր երկրներում» կոնֆերանս (Բոսնիա Հերցեգովինա)
- «Գլոբալ մշակաբույսերի բազմազանության գագաթնաժողով 2023»: Գերմանիա
- Գերմանիայի ակադեմիական փոխանակման ծառայություն (DAAD), Գերմանիա
- Պետերբուրգյան 14-րդ միջազգային կրթական ֆորում (Պետերբուրգ)
- Չինաստան-Եվրոպա երկաթուղային էքսպրեսի կողմից սննդամթերքի և գյուղատնտեսական ապրանքների միջսահմանային առևտրի և փոխադրման որակի ապահովման մասին (Չինաստան)

Վերապատրաստումներ

- 2024 թ.-ին այլ (բացի Էրազմուս+-ից) ծրագրերով վերապատրաստման մեկնել են ՀԱԱՀ 23 աշխատակից.
- Օրգանական գյուղատնտեսության հզորացում Հայաստանում բարձրագույն կրթության մասնակցային և գիտելիքի փոխանակում հանուն զարգացման» SOAA ծրագրի շրջանակում – 1 աշխատակից
- Էրազմուս+ ՀԳ2, AFISHE նախագիծ – 9 աշխատակից
- Էրազմուս+ՀԳ2, վերապատրաստում Ռիգայի տեխնիկական համալսարանում - 4 աշխատակից
- Էրազմուս+ՀԳ2, վերապատրաստում Տուրկուի կիրառական գիտությունների համալսարանում - 1 աշխատակից
- Պետերբուրգյան 14-րդ միջազգային կրթական ֆորում - 1 աշխատակից
- «Չինաստան-Եվրոպա երկաթուղային էքսպրեսի կողմից սննդամթերքի և գյուղատնտեսական ապրանքների միջսահմանային առևտրի և փոխադրման որակի ապահովման մասին» սեմինար – 4 աշխատակից:

ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

2023-24 թթ. ՀԱԱՀ աշխատակիցներն ու ուսանողները հնարավորություն են ունեցել մասնակցել վերապատրաստումների, դասընթացների և միջազգային համաժողովների և հանդիպումների:

Գործուղումներ

Ծրագիր/պայմանագիր	**Քանակ**	
	ուսանողներ	անձնակազմ
Էրազմուս+ ՀԳ1	8	87
Էրազմուս+ՀԳ2		17
Այլ	1	38
Ընդամենը	**9**	**142**

ՄԿԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿԴ-ն կարևոր դեր է խաղում ՀԱԱՀ ակադեմիական և հետազոտական համագործակցությունների խթանման գործում: Այս վերլուծությունը գնահատում է ՄԿԴ-ի աշխատանքի արդյունավետությունը՝ ուսումնասիրելով դրա կատարողականի հիմնական ցուցանիշները, մարտահրավերները և բարելավման ոլորտները:

ՄԿԴ-ի առաջնային գործառույթները ներառում են փոխանակման ծրագրերի կառավարում, միջազգային համագործակցության խթանում, գլոբալ գործընկերության հաստատում և պահպանում, ինչպես նաև շարժունության մասնակիցներին աջակցության ծառայություններ մատուցելը:

Ինչպես և նախորդ տարիներին, ՄԿԴ-ն տեղեկատվություն է տարածել առկա միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ: Տեղեկատվության տարածման թափանցիկությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՄԿԴ-ն ապահովում է, որ բոլոր առնչվող մանրամասները լայնորեն տարածվեն սոցիալական ցանցերում և ՀԱԱՀ պաշտոնական կայքում: Այս բազմալիքային մոտեցումը նպատակ ունի հասնել ավելի լայն լսարանի և ապահովել կարևոր տեղեկատվության հեշտ հասանելիություն:

Էրազմուս+ միջազգային տեղեկատվական օրերի շրջանակներում հոկտեմբեր ամսին ՄԿԴ-ն կազմակերպել էր 2-օրյա հանդիպումներ ՀԱԱՀ 1-ին կուրսեցիների հետ: Սակայն մի քանի տասնյակ 1-ին կուրսեցիներից ընդհամենը 20-ը ներկա գտնվեցին հանդիպմանը, ինչը խոսում է ուսանողների թույլ հետաքրքրվածության և դեկանատների կողմից տեղեկատվության տարածման և մասնակցության կազմակերպման ցածր աստիճանի մասին:

Այս տարի ևս դեպարտամենտի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և ՀԱԱՀ կայքում տեղադրվում են միջազգային ծրագրերի վերաբերյալ տարաբնույթ հայտարարություններ. Էրազմուս+ ՀԳ1 ծրագրի մրցույթներ, Էրազմուս+ ծրագրի մասնակցիների լավագույն փորձ, Էրազմուս+ ՀԳ2 ծրագրեր, տարբեր մրցույթներ, կրթաթոշակներ, տեսանյութեր և այլն: 2023-2024 թթ.-ին ՄԿԴ-ի կողմից տեղադրվել են շուրջ 93 նյութեր, որոնցից 31-ը եղել են Էրազմուս+ ՀԳ1-ի մրցույթների հայտարարություններ, 5-ը նյութեր Էրազմուս+ ՀԳ2 ծրագրերի ընթացիկ գործունեության մասին, 19-ը շարժունության մասնակիցների հոդվածներ, իսկ մնացածը՝ այլ բնույթի տեղեկություններ:

Վերադարձից հետո շարժունության յուրաքանչյուր մասնակից լրացնում է ՄԿԴ-ի կողմից տրամադրված առցանց հարցաթերթիկը: Այս հարցաշարը թույլ է տալիս ՄԿԴ-ին բացահայտել շարժունակության գործընթացի ուժեղ և թույլ կողմերը: Արդյունքները վերլուծելով՝ ՄԿԴ-ն կարողանում է մշակել ռազմավարություններ՝ վերացնելու ցանկացած թերություններ և բարելավելու ընդհանուր փորձը:

Հիմք ընդունելով ՄԿԴ-ի կողմից կատարվող պարբերական մոնիթորինգն ու դրանց արդյունքները, ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության հետագա զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

1. **Օտար լեզուների իմացության բարձրացում** ուսանողների և աշխատակիցների շրջանում: Շարժունության շատ մրցույթներ ուղղակի թափուր են մնում կամ մասնակցում են օտար լեզվի իմացության ոչ բավարարար մակարդակով մասնակիցներ:
2. **Շարժունության ծրագրերի ակադեմիական համակարգողների նշանակում.** Էրազմուս+-ի կամ այլ կրեդիտային շարժունության ծրագրերի առավել արդյունավետ կազմակերպման համար ամեն ֆակուլտետում պետք է լինեի գոնե մեկ ակադեմիական համակարգող: Սա ամենաթույլ կետերից մեկն է ՀԱԱՀ-ում, ինչի պատճառով ՄԿԴ-ն և հատկապես՝ թեկնածու ուսանողները, բախվում են անհարկի խոչընդտների: Որոշ ակադեմիական պատասխանատուներ դեռ չեն պատկերացնում շարժունության առանձնահատկությունն ու կրեդիտների փոխճանաչման հիմնական սկզբունքները:
3. **Միջազգային ծրագրերի համար դասախոսների կարողությունների հզորացում.** բարելավել դասախոսների կարողությունը միջազգային ծրագրերի համար առաջարկներ գրելու և ներկայացնելու համար: Սա շատ կարևոր է մասնագիտացված ծրագրերին դիմելու և համալիր ծրագրերի փաթեթներ ներկայացնելու համար:
4. **Օտար լեզուների դասընթացների բազայի ստեղծում.** ստեղծել օտար լեզվով դասավանդման կրթական ծրագրերի բազա (course catalog) և տեղեկատվական նյութեր: Դրսից տարբեր մարդիկ ցանկություն են հայտնում սովորել ՀԱԱՀ-ում, սակայն դեռևս բացակայում է օտարալեզու ծրագրերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվական բազան: ՄԿԴ-ն փորձեց ստեղծել նման բազա, սակայն

դասախոսների մեծ արտահոսքի և ֆակուլտետներից ներկայացված ոչ հավաստի տվյալների պատճառով այն հետաձգվեց:

5. **Դասախոսների մասնակցության ճանաչման և պարգևատրման համակարգի մշակում.** Ստեղծել համակարգ՝ ճանաչելու և պարգևատրելու պրոֆեսորադասախոսական կազմի անդամներին, ովքեր ակտիվորեն մասնակցում և ներդրում են ունենում միջազգային ծրագրերում: Սա կարող է խթանել դասախոսների ավելի մեծ ներգրավվածությունը և նվիրվածությունը այս նախաձեռնություններին:

S	W
• ՄԿԴ աշխատակիցների ակտիվ գործունեություն, • առցանց հարցաթերթիկների օգտագործում հետադարձ կապի համար, ինչը նպաստում է տալիս շարունակական կատարելագործմանը • տեղեկատվության լայն սպեկտր, ներառյալ Էրազմուս+ մրցույթները, միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրեր, մասնակիցների փորձը և այլ միջազգային հնարավորություններ	• սահմանափակ մասնակցություն միջազգային ծրագրերի հանդիպումներին, ինչը ցույց է տալիս ուսանողների թույլ հետաքրքրությունը • օտար լեզվին տիրապետող ուսանողների և աշխատակիցների քանակի նվազում • համապատասխան ուսումնական ծրագրերի, ընդունելության կարգի բացակայություն օտարերկրյա ուսանողների համար • սեփական միջոցների անբավարարություն տարբեր վերապատրաստման դասընթացներին ՀԱԱՀ աշխատակցիների և ուսանողների մասնակցությունը ֆինանսավորելու համար

	• ոչ բավարար կենցաղային պայմաններ ՀԱԱՀ հանրակացարանում • որոշ ակադեմիական պատասխանատուների շրջանում շարժունության և կրեդիտների փոխճանաչման վերաբերյալ գիտելիքների պակաս, որն առաջացնում է կազմակերպչական մարտահրավերներ
O	T
• ագրարային ոլորտի քաղաքականության խթանում կառավարության կողմից • կայուն միջազգային կապեր և գործընկերներ հատկապես ԵՄ համալսարանների հետ	• ուսանողների թվաքանակի պակասում, ինչը կարող է հանգեցնել որոշ ծրագրերի փակման • որոշ ԵՄ համալսարանների կողմից համագործակցության պայմանների խախտում • ՀՀ գտնվող դեսպանատների գերծանրաբեռնված վիճակ, որի պատճառով դժվարանում է իրականացնել շարժունությունը • Հայաստանում որոշ եվրոպական երկրների դեսպանատների բացակայություն երկարաժամկետ վիզաների համար • աշխարհաքաղաքական իրավիճակ